սպաւիենով յանասանի եւ ի խաղաղութեան կարեւնայ սպասաւորել իր եկեղեցւոյն» . . . :

Մարդ կարդալով այս տողերը, որոնք այնքան հեռու են զայն ստորագրողին իսկ համոզումը ըլլալէ եւ որոնք կը նկրտին առաքինութեան եւ ուղղամտութեան դափնեպսակով զարդարելու ճակատը մարդու մը՝ որ բարոյական ինկածութեան ամէնէն գազիր երեւոյթները ի յայտ կ'ածէ ոչ միայն ցոփակեաց կեանքի մը գայթակղութիւնը սփռելով իր շուրջը, այլ կը դաւէ իր եկեղեցիին դէմ նենգութեամբ՝ գաղտնի եւ ծածուկ բանակցութիւններով, եւ չի վարանիր՝ իր հօտին կամքին հակառակ՝ իշխելու համար օտար միջամտութիւն հրաւիրելու եւ իր հակառակորդները իբր մատնիչ ներկայացնելու եւ օտար կառավարութիւններ անոնց դէմ գրգռելու, պարզապէս կ'ահաբեկի եւ իր աչքին առջեւ կը մեծնայ պատկերը, անոնց որոնք ոչ մէկ տէր ու տիրական, ոչ մէկ ոյժ ու ազդեցութիւն, ո՛չ մէկ նեցուկ ու յենարան ունենալով, քաջութեամբ կը դիմագրաւեն այնքան հզօր ազդեցութեանց եւ ոյժերու դէմ, միայն հաւատքով ու համոզումով եւ աշխարհիկ կեանքի վայելքներու արհամարհանքով՝ խստաբեր կեանքի մը ընծայած առաքինութեան չնորհին ուժով օծուն, կուրծք